ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 44-Ն

« 25 » սեպտեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 792-Ն որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքին 2014 թվականի հուլիսի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը 50.0 հազ. դրամ սահմանելու կապակցությամբ համայնքային բյուջետային հիմնարկներում 1974 թվականի հուլիսի 1-ից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված՝ առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով համայնքներին նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տրամադրելու համար 2014 թվականի սեպտեմբերի 1-ի N77 սուբվենցիայի հատկացման պայմանագրով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Մարալիկ համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7331 հոդվածի պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տողի << 0 >>թիվը փոխարինել <<759.0>> թվով:
2. Համապատասխանաբար բյուջեի վարչական մասի ծախսային մասի 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<79853.0>> թիվը փոխարինել <<80612.0>> թվով, այդ թվում՝

1) 01.1.1.51 (ապարատի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<22974.2>> թիվը փոխարինել <<23255.9>> թվով:
2) 08.2.1.51 (գրադարանի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<6682.0>> թիվը փոխարինել <<6707.7>> թվով:

3) 08.2.3.51 (մշակութային երիտասարդական կենտրոնի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<8020.0>> թիվը փոխարինել <<8148.6>> թվով:

4) 09.1.1.51 (նախադպրոցական հիմնարկի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<11000.0>> թիվը փոխարինել <<11102.9>> թվով:

5) 09.5.1.51 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<9087.0>> թիվը փոխարինել <<9229.9>> թվով:

6) 09.5.1.51 (արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<6682.0>> թիվը փոխարինել <<6759.2>> թվով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՏՃԵՆԱԼԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
25 սեպտեմբերի 2014 թվական